

ՌՈՍԼԻՆՅԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՆԿԱՐԱԶԱՐԴ

ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Չուգասզյան Լ. (ԵՊՀ, Հայաստան)

Բանալի բառեր՝ Դրագարկ, Թորոս Ռոսլին, ձեռագիր, մանրանկար, Ֆիցվիլիամ:

Տարիներ առաջ, 13-րդ դարի կիլիկյան նշանավոր նկարիչ Թորոս Փիլիսոփայի գեղարվեստական ժառանգությանը նվիրված մեր հոդվածի պատրաստման կապակցությամբ քննության առանք նրա ձևավորած 1295 թ. Ավետարանը (Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, թիվ 6290), որը ստեղծվել է Դրագարկում: Այս մատյանի գրիչներն են Թորոս փիլիսոփան և Յոհանը: Դրագարկի Ավետարանում ուշադրություն է գրավում ձեռագրի սկզբի էջերից մեկի վրա սոսնձված նկարագարդ թերթը, որի վրա ներկայացված մանրանկարի զննությունը թույլ է տալիս մտածելու, որ անձանոթ պատկերը որևէ առնչություն չունի ողջ մատյանի մնացած ձևավորումների հետ: Անկասկած, այն ամբողջությամբ չպահպանված ինչ-որ ձեռագրի մի պատառիկն է: Խնդրո առարկա մանրանկարում սպիտակ փառապսակի խորքի վրա ցուցադրված է շագանակագույն խաչափայտը, ըստ որում վերջինիս կենտրոնում հորիզոնական և ուղղահայաց տախտակների միացման կետից քիչ ցած նկարված է թափուր սուրբ գահը: Զախից և աջից ձեռքերը լայն տարածած և փառապսակը ամուր բռնած հանդես են գալիս մեկական հրեշտակներ: Խաչափայտից ներքև՝ պատկերի ստորին հատվածում, սիմետրիկ ձևով կիսապառկած դիրքով ցուցադրված են տղամարդու և կնոջ երկու կերպարանքներ: Այս նորահայտ պատառիկը թվում է, թե պատահականորեն չի հայտնվել իրեն ապաստան տված ձեռագրի մեջ: Այս մատյանի մեջ հիշված Թորոս քահանան պետք է որ լինի նույն ինքը՝ կիլիկյան մեծ վարպետ Թորոս Ռոսլինը: Նրա վնասված և մեզ չհասած ձեռագրից պահպանված

խնդրո առարկա թերթը, հավանաբար կորստից փրկելու նպատակով, Դրագարկի Ավետարանի մեջ է փակցրել նրա աշակերտներից որևէ մեկը, գուցե անձնապես Թորոս Փիլիսոփան կամ Յոհանը:

Մեր կարծիքով Թորոս Ռոսլինի արվեստանոցին է առնչվում ևս մի պատառիկ՝ նկարագարդ թերթ, որը հիշատակվել է զանազան գիտնականների աշխատություններում՝ է առանց մեծ վարպետի միջավայրին վերագրվելու:

Մեզ հետաքրքրող նկարագարդ թերթը մաս է կազմում մի ժողովածուի, որը պահվում է Քեմբրիջի (Անգլիա) Ֆիցվիլիամ թանգարանի Մաքքլին ֆոնդում (ծեռ. 201): Այս ձեռագիրը բաղկացած է տարբեր պատառիկ թերթերից, որոնցից երեքը զարդարված են հայկական ընտիր մանրանկարներով և կտրված են Ավետարանը բովանդակող գրչագիր հատորներից, ըստ որում այդ պատառիկներից երկուսը ցուցադրում են ավետարանիչ Ղուկասին, իսկ մյուսը՝ Մատթեոսին: Վերջիններս միմյանց հետ որոշակի ընդհանրություններ ունեն և կտրված են միևնույն ձեռագրից: Մեզ հետաքրքրող երրորդ պատկերը մեծ չափով տարբերվում է այդ երկու ստեղծագործություններից: Խնդրո առարկա մանրանկարում Ղուկաս ավետարանիչը ցուցադրված է ձախից, նստած դիրքով: Ղուկասի դիմանկարի անսովոր պատկերագրությունը պայմանավորված է մանրանկարում ընդգրկված Թեոփիլոսի կերպարանքով, որը ցուցադրված է աջից: Մի շարք առանձնահատկություններով Ֆիցվիլիամ թանգարանի մանրանկարը աղերսվում է միայն Ռոսլինի մատյանների ձևավորումներին: Մեզ թվում է, որ Թեոփիլոսի և ավետարանիչի կերպարները երկու տարբեր նկարիչների գործեր են: Այդ հեղինակները երկուսն էլ աշխատել են Ռոսլինի արվեստանոցում: Այս մանրանկարները թույլ են տալիս հուսալ, որ մի օր կգտնվեն Թորոս Ռոսլինի արվեստանոցին առնչվող նաև այլ մասունքներ, և այդպիսով

կրացահայտվեն մեծ վարպետի գեղարվեստական ժառանգության  
անհայտ մնացած էջերը:

NEWLY-DISCOVERED ILLUSTRATED MANUSCRIPT FRAGMENTS

ATTRIBUTED TO TOROS ROSLIN'S WORKSHOP

Chookaszian L. (Yerevan State University, Armenia)